ԿԱՐԵՒՈՐ ՆԵՐԴՐՈՒՄ ԳԱՆՁԱՐԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ԺԹ. դարավերջից եւ Ի. դարասկզբից աւելի մեծ ուշադրութիւն սկսեց հատկացուել Հայ միջնադարեան բանաստեղծութեան հրատարակմանը եւ ուսումնասիրութեանը: Լոյս տեսան բազմաթիւ ժողովածուներ, մենագրութիւններ, յօդուածներ, որոնցում քննարկւում եւ բացայայտւում էին մեր միջնադարեան բանաստեղծութեանը վերաբերող զանազան բնագրագիտական եւ տեսական խնդիրներ: Սակայն չնայած կատարուած այդ ահռելի աշխատանքին հայ միջնադարեան բանաստեղծութեան հարուստ անդաստանում կան զանազան բնագաւառներ, որոնք դեռեւս կարօտ են մնում համակողմանի եւ ամբողջական ուսումնասիրութեան: Այդ բնագաւառներից մէկն է հայ միջնադարեան գրական ժառանգութեան մէջ իր բացառիկ տեղն ունեցող Գանձարան ժողովածուն: Եւ ահա այդ բացը տարիների իր քրտնաջան աշխատանքով փորձել է լրացնել անուանի հայագէտ Արմինէ Քէօշկէրեանը: Հեղինակի աշխատասիրութեամբ տարբեր տարիների լոյս են տեսել Գրիգոր Նարեկացու, Ներսէս Շնորհալու տաղերի եւ գանձերի ժողովածուները՝ համապատասխան առաջաբաններով եւ ծանօթագրութիւններով: Գանձարան ժողովածուներին նուիրուած ներկայ աշխատասիրութեան[1] մէջ հեղինակը ի մի է բերում տուեալ նիւթի վերաբերեալ իր կատարած հետազօտութիւնների արդիւնքը՝ քննութեան առարկայ դարձնելով Գանձարան ժողովածուների սկզբնաւորումը եւ զարգացումը Ժ – ԺԳ դարերի ընթացքում: Հեղինակը փորձում է իր այս աշխատութեամբ թիչ թէ շատ պատասխանել խնդրոյ առարկայ ժողովածուների հետ կապուած բազմատեսակ հարցերին: Նա այդ խնդիրներին պարզաբանում տալու համար փորձում է դիտարկել այդ մշակոյթի զարգացման ընթացքն իր ամբողջութեան մէջ՝ փուլ առ փուլ:

Աշխատասիրութեան առաջին մասում, որը վերնագրուած է «Գանձարանային ստեղծագործութիւններ եւ Գանձարան ժողովածուներ», հեղինակը մանրամասնօրէն անդրադառնում է գանձի՝ որպէս միջնադարեան բանաստեղծական իւրօրինակ ժանրի տեսութեան հարցերին: Մասնաւորապէս քննում է **գանձ** եզրը, անդրադառնում նրա ծագմանը, զարգացման առանձնայատկութիւններին, ճշտում նրա յարաբերութիւնները տաղի, մեղեդու եւ մեր միջնադարեան բանաստեղծական միւս ժանրերի հետ, մատնանշում գանձի առանձնայատկութիւնները: Հեղինակը մասնաւորապէս կանգ է առնում Գանձարան ժողովածուի եւ Շարակնոցի նմանութիւնների վրայ: Նա նշում է, որ Շարակնոցի հետ Գանձարաններն ունեն նմանութիւն, մանաւանդ բովանդակած նիւթի համակարգային իրենց դասակարգումով: Յատկապէս այս նմանութիւնները բխում են այս երկու ժողովածուների եկեղեցական փօնացոյցի հետ ունեցած առընչութիւններից: Սակայն հեղինակը մատնանշում է, որ ի տարբերութիւն Շարակնոցի, Գանձարան ժողովածուների ձեւաւորումն ընթացել է շատ աւելի ազատ եւ անկաշկանդ: Խօսելով Գանձարան ժողովածուների զարգացման օրինաչափութիւնների մասին՝ Արմինէ Քէօշկէրեանը մատնանշում է երկու փուլ: Առաջին խմբի համար բնորոշ է որոնումների, աստիճանական հարստացման ու ձեւաւորման ընթացքը, իսկ երկրորդի հա-

1 **Արմինէ Քէօշկէրեան,** Գանձարանային մշակոյթ. սկզբնավորում եւ զարգացում (Ժ-ԺԳ դարեր), Եր., 2008, 383 էջ:

մար յատկանշական են ծաղկումն ու ծաւալումը: Նա վերոնշեալ գանձարանային երկու հիմնական խմբերից առանձնացնում է միանգամայն տարբեր, ԺԸ – ԺԹ դարերին պատկանող, եզակի նմոյշներով հանդէս եկող այն ընդօրինակութիւնները, որոնք ծաւալով անհամեմատ փոքր են: Հեղինակը նշում է, որ նրանցում տեղ գտած գանձերն այնքան են կրճատուած, որ ամենեւին պատկերացում չեն կարող տալ իրենց սկզբնական տեսքի, ինչպէս նաեւ գանձարանային օրինաչափութիւնների մասին: Ա. Քէօշկէրեանը սոյն ուսումնասիրութեան մեջ, նիւթի առատութեան, հարցերի բազմազանութեան թելադրանքից ելնելով, ընդգրկել է միայն գանձարանային առաջին խմբի ուսումնասիրութիւնը:

Անհրաժեշտ է նշել, որ ուսումնասիրութեան այս գլխի նյութը հիմնականում ընդգրկում է հեղինակի՝ Գրիգոր Նարեկացու եւ Ներսէս Շնորհալու գանձերի եւ տաղերի հրատարակութիւններին որպէս առաջաբան կցուած ուսումնասիրութիւնները, սակայն որոշակի լրացումներով:

Ա. Քէօշկէրեանի ուսումնասիրութեան յաջորդ գլուխը վերնագրուած է «Գանձասաց ու տաղասաց հեղինակներ»: Այս մասում հեղինակն առանձին-առանձին անդրադառնում է Գրիգոր Նարեկացու, Ներսէս Շնորհալու, Ներսէս Լամբրոնացու, Մխիթար Այրիվանեցու, Գէորգ Սկեւռացու, Մովսէս Երզնկացու, Առաքել Բաղիշեցու, ինչպես նաեւ ԺԱ.-ԺԲ. դարերին ստեղծագործած մի շարք այլ հեղինակների գանձարանային բնոյթի ստեղծագործութիւններին:

Գրիգոր Նարեկացու գանձարանային եւ տաղային բնոյթի ստեղծագործութիւններին անդրադառնալով՝ Արմինէ Քէօշկէրեանը յատկապէս կարեւորում է նրանց համակողմանի ուսումնասիրութեան անհրաժեշտութիւնը որպէս գանձարանային ժանրի առաջնեկների: Հեղինակը, հաշուի առնելով բնագրագիտական մի շարք իրողութիւններ, հիմնաւորում է Գրիգոր Նարեկացու՝ գանձարանային ժանրի հիմնադիր լինելու հանգամանքը: Հեղինակը մատնանշում է, որ Նարեկացուց մեզ հասած տասը գանձերն ու քսանմէկ տաղային միաւորները գանձարաններում հանդէս են գալիս այդ ժողովածուներին բնորոշ համակարգային սկզբունքներով եւ ներկայացնում են եկեղեցական տասնվեց տօն: Անդրադառնալով Նարեկացու գանձարանային համակարգային միաւորներին՝ **գանձ, տաղ, փոխ**, Քէօշկէրեանը պարզում է, որ այդ համակարգային պատկերն այնքան էլ կայուն չէ: Սակայն այս համակարգային անկայունութիւնը Գանձարան ժողովածուներում լրացում է ի հաշիւ այլ հեղինակների ստեղծագործութիւնների, որն ուսումնասիրութեան հեղինակին հուշում է, որ նրանք սկզբնապէս ունեցել են հեղինակի կողմից յօրինուած իրենց զուգակիցները, որոնք սակայն ինչ-ինչ բերումով կորել են:

Ուշադրության արժանի է նաեւ այն հանգամանքը, որ հեղինակը հնագոյն ձեռագրերի հիման վրայ փորձում է վերականգնել Նարեկացու գանձերի ու տաղերի գանձարանային համակարգի ենթադրեալ նախնական պատկերը՝ չբացառելով նորագիւտ ձեռագրերի հիման վրայ աւելի կատարեալ եւ ամբողջական գանձարանային համակարգի պատկերի վերականգնման հնարաւորութիւնը: Ա. Քէօշկէրեանն իր աշխատասիրութեան Գրիգոր Նարեկացուն յատկացուած մասում տալիս է նաեւ 1981թ. իր կողմից խնդրոյ առարկայ հեղինակի գանձերում եւ տաղերում հանդիպող դժուարհասկանալի բառերի ցանկն ու բացատրութիւնը:

Յատկապէս սոյն ուսումնասիրութեան արժէքաւոր կողմերից մէկն այն է, որ հեղինակը

փորձում է լրացնել Նարեկացուց մինչեւ Շնորհալի ընկած ժամանակահատուածի գրականութեան մէջ գանձի ժանրին պատկանող ստեղծագործութիւնների համարեա չգոյութեան հանգամանքը: Խօսելով այս ժամանակայատուածում գանձի ժանրի ստեղծագործութիւնների խիստ սակաւութեան մասին՝ ուսումնասիրողն այն կարծիքն է յայտնում, որ Գրիգոր Նարեկացու ինքնատիպ այդ ստեղծագործութիւնները հանդուրժելի նորամուծութիւն չէին Եկեղեցու համար, ուր նրանք մուտք պիտի գործէին համատեղ հանդէս գալու իրենց կայուն տեղն ու դերն ունեցող ժամագրքային քարոզների, սաղմոսների ու շարականների հետ եւ ուսումնասիրողը, որպէս այդ անհանդուրժողականութեան ապացոյց, բերում է Նարեկացու վարքում յիշատակուող հալածանքները: Այսպիսով Նարեկացու՝ Եկեղեցու ծիսական կեանքում այս հաւելումը միանգամից չէ, որ պիտի ընդունուէր եւ իր հետեւորդները ունենար: Չնայեած այս հանգամանքին Ա. Քէօշկէրեանը ցոյց է տալիս, որ նորաստեղծ այս մշակոյթն ունէր նաեւ իր համակիրները եւ հետեւորդները, ոչ միայն հեղինակի անմիջական շրջապատում: Որպէս այս իրողութեան ապացոյց աշխատասիրողը բերում է Սիսում, Դրազարկում, Կաֆայում գրուած մի շարք ձեռագրեր, որոնցում առկայ են մի շարք գանձեր (մի մասն անհեղինակ է), իսկ միւս մասի հեղինակների անուններն անծանօթ են ժամանակակից բանասիրութեանը: Ա. Քէօշկէրեանը, անդրադառնալով անհեղինակ գանձերին, նշում է, որ նրանց մեծ մասը ծայրակապ չունեն, նաեւ զուրկ են հեղինակի մասին յուշող համապատասխան նշումից: Այդ բանաստեղծութիւնները գրուած են անյանգ, ունեն ազատ տաղաչափութիւն եւ կոչւում են քարոզ: Քէօշկերեանը գանձի իւրօրինակ այս տեսակի վրայ նկատում է Բարսեղ Կեսարացու «Զատկի քարոզի» եւ Գրիգոր Նարեկացու գանձերի բացայայտ ազդեցութիւնը:

Այնուհետեւ անդրադառնալով հեղինակային անունները պահպանած գանձերին՝ ուսումնասիրողը նշում է, որ դրանք էլ ենթադրաբար կարելի է վերագրել այդ ժամանակահատուածին, որովհետեւ այդ հեղինակների ինքնութեան մասին լրացուցիչ տեղեկութիւններ չեն պահպանուել: Աշխատասիրողն այնուհետեւ բերում է նրանց անունները եւ նշում, որ դրանցից իւրաքանչիւրը ներկայանում է գանձերի մէկ կամ մի քանի նմոյշով: Այդ գանձերը շարադրուած են անյանգ եւ ազատ տաղաչափութեամբ եւ իրենց ընդհանուր յատկանիշներով առանձնապէս չեն տարբերւում Գրիգոր Նարեկացու համապատասխան ստեղծագործութիւններից:

Ա. Քէօշկէրեանն այնուհետեւ անդրադառնում է յիշեալ գանձասացիների շարքը դասուող երկու հեղինակների՝ Քրիստափորին եւ Սարգսին, որոնց մասին որոշակի փաստեր յայտնի են, եւ նրանց կարելի է տեղադրել քննուող ժամանակահատուածում: Այս երկու հեղինակները ներկայանում են գանձերին բնորոշ կառուցուածքային առանձնայատկութիւններով եւ ունեն հեղինակային պատկանելութիւնն անառարկելի դարձնող բացայայտ յատկանիշներ, որոնք հանդէս են գալիս լոկ մասնակի շեղումներով:

Ուսումնասիրողն իր ուշադրութիւնը սեւեռում է նաեւ տաղային առանձին միաւորների վրայ, որոնք պատկանում են Ժ.-ԺԲ. դարերում ապրած հանրայայտ անձնաւորութիւնների, ինչպէս օրինակ՝ Գրիգոր Մագիստրոս, Յովհաննէս Սարկաւագ, Գրիգոր Գ. Կաթողիկոս Պահլաւունի եւ այլն: Յիշեալ հեղինակների անուններով ներկայացող եզակի այդ նմոյշներն ունեն բացայայտ նմանութիւն գանձարանային տաղերի հետ եւ օգնում են պատկերացնելու դրանց՝ իբրեւ այդպիսի ստեղծագործութիւնների, ձեւաւորման ու զարգացման ընթացքը

Գրիգոր Նարեկացուց մինչեւ Ներսէս Շնորհալի: Այնուհետեւ աշխատասիրողը քննութեան առարկայ է դարձնում վերոյիշեալ հեղինակներից պահպանուած գանձարանային բնոյթ ունեցող գործերը: Այսպիսով Ա. Քէօշկէրեանը հանգում է այն եզրակացութեան, որ Գրիգոր Նարեկացու եւ Ներսէս Շնորհալու միջեւ գտնուող ժամանակահատուածում գրուել են եւ՛ գանձեր, եւ՛ տաղեր: Դրանց առանձնայատկութիւնն այն է, որ նրանք հանդէս են գալիս իրարից անջատ ու ոչ որպէս գանձ ու տաղից բաղկացած համակարգի տաղեր:

Ա. Քէօշկէրեանն առանձին բաժիններով անդրադարձ է կատարել նաեւ Ներսէս Շնորհալու, Ներսէս Լամբրոնացու, Մխիթար Այրիվանեցու, Գէորգ Սկեւռացու, Մովսէս Երզնկացու, Խաչատուրի եւ Մկրտիչի, Առաքել Բաղիշեցու գանձարանային ժառանգութեանը:

Անդրադառնալով Ներսէս Շնորհալու գանձարանային ժառանգութեանը՝ Արմինէ Քէօշկէրեանը նշում է, որ ի տարբերութիւն Գրիգոր Նարեկացու համանման գործերի՝ հնարաւոր չէ ներկայացնել եկեղեցական տօների շարքով հանդէս եկող գանձարանային համակարգի ամբողջութիւնը՝ Շնորհալու քանակական առումով գանձերի ու տաղերի անհամապատասխանութեան պատճառով. եթէ գանձերը ներկայանում են լոկ եզակի նմոյշներով, ապա տաղերի թիւը կազմում է մէկ հարիւրեակ: Հաւանական չէ նաեւ, որ յայտնաբերուեն առկայ տաղերի գէթ մօտաւոր չափով գանձեր, քանի որ Ներսէս Շնորհալու գրական ժառանգութիւնը լաւ է պահպանուել, ու կարող են ի յայտ գալ գանձերի միայն առանձին նոր միաւորներ (էջ 114): Այնուհետեւ աշխատասիրողը մանրամասն քննութեան առարկայ է դարձնում Շնորհալու գանձերը, ճշտում դրանց օգտագործման սահմանները եկեղեցական ծիսական արարողութիւններում: Այս առումով բաւականին հետաքրքիր եւ կարեւոր են Քէօշկէրեանի դիտարկումները Մայր Մաշտոցում առկա Միւռնօրհնութեան կանոնում տեղ գտած Ներսէս Շնորհալու գրչին պատկանող գանձի վերաբերեալ:

Ուսումնասիրողը համեմատութեան մէջ է դնում Գրիգոր Նարեկացու եւ Ներսէս Շնորհալու գանձերը եւ ցոյց տալիս, որ Շնորհալու գանձերն ունեն այն բոլոր առանձնայատկութիւնները, որոնք յատկանշում են Գրիգոր Նարեկացու ստեղծագործութիւնները. այն է՝ անյանգ ու ազատ տաղաչափութեամբ շարադրանք, տների սկզբնատառերով հանդէս եկող հեղինակի անունը յօդող ծայրակապ, վերջինիս «երգ» հատուածի «ր» տառը կազմելու համար Գրիգոր Նարեկացու գործածած *Ռոպել* կամ *Ռամեալ* բառերի նոյնանման գործածութիւնը եւ եզրակացնում. «Միանգամայն ակնբախ է այն ազդեցութիւնը, որ կրել է Ներսէս Շնորհալին իր մեծ նախորդից. ըմբռնելի է նաեւ առաջնահերթ իր նպատակը՝ պահպանել նրանից սկիզբ առած ու զարգացման հեռանկար ունեցող յիշեալ բանաստեղծութիւնների հիմնական առանձնայատկութիւնները» (էջ 119-120): Հեղինակը, քննելով Ներսէս Շնորհալու գանձարանային ժառանգութեան անհամեմատ սակաւութիւնը, նրա տաղային ժառանգութեան համեմատութեամբ՝ այն կարծիքին է հանգում, որ դրա պատճառը մասամբ հասկանալի է դառնում, նկատի ունենալով գանձարանային մշակոյթի վիճակը Գրիգոր Նարեկացուց յետոյ, ինչպէս նաեւ Ներսէս Շնորհալու՝ գանձի եւ տաղի օգտագործման ոլորտում հաւասարակշռութիւն մտցնելու ցանկութեամբ, որովհետեւ մինչ այդ գանձերն աւելի շատ էին, քան տաղերը:

Ա. Քէօշկէրեանն անդրադարձ է կատարում Շնորհալու գանձերի եւ տաղերի կառուցուածքային ու տաղաչափական առանձնայատկութիւններին: Շնորհալուն հատկացուած

հատուածի վերջում ուսումնասիրողը բերում է նրա տաղային ժառանգութիւնը ներկայացնող երկու ցանկ: Առաջին ցանկն ընդգրկում է Շնորհալու տաղերն ու փոխերը՝ ըստ 1987 թ. հրատարակուած քննական բնագրի, իսկ երկրորդը՝ հատուած-տաղերի փոքրաթիւ նմոյշներ՝ ըստ Ներսէս Շնորհալու այն գործերի, որոնք հիմք են հանդիսացել այդ միաւորների համար (էջ 146-160):

Այնուհետեւ ուսումնասիրողն անդրադառնում է Ներսէս Լամբրոնացուն, որի հարուստ գրական ժառանգութեան մէջ առանձնայատուկ տեղ են գրաւում մէկ տասնեակի չափ տաղերը, իսկ նրա անունով գանձեր առհասարակ չեն պահպանուել: Ա. Քէօշկէրեանը բերում է Լամբրոնացու տաղերի ցանկը՝ խորագրերով եւ սկզբնատողերով: Նա քննութեան առարկայ է դարձնում դրանք, փորձում լուծում տալ հեղինակային պատկանելութեան հետ կապուած մի շարք խնդիրների:

Քննելով Լամբրոնացու տաղերը՝ Քէօշկէրեանը հանգում է այն եզրակացութեան, որ դրանք որակական նոր աստիճան չեն արձանագրել. բայց եւ այնպէս նրանց, ինչպէս նաեւ Գրիգոր Նարեկացուն յաջորդած եւ Ներսէս Շնորհալուն նախորդած հեղինակների տաղային նոյնիսկ եզակի նմոյշների շնորհիւ ակներեւ է դառնում, որ գանձարանային մշակոյթը թէեւ նորաստեղծ, արդէն մաս էր կազմում գրական մեր գործիչների ստեղծագործական ժառանգութեան:

ՀԵՐՄԻՆԷ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ